«ԵՐԿԻՆՔՆԵՐ» ՏԵՍԱԾ ԱՐՁԱԳԱԳՐԻ ԵՐԱԶԸ

«Հարավային տենդ»՝ միայն այսպես կարելի է բնորոշել Աբիգ Ավագյանի երազը, որն և է հեղինակի ստեղծագործական որոնումների առանցքն ու մեկնակետը: Գրականագիտությունը հիշյալ ժողովածուով ճանաչեց նրան որպես «Գիսաստղ որոնող մարդ»[1]: Մեկը, ով «Արդար կյանքի ջատագովությամբ»[2] է հյուսում «Վեպ Իրանի մասին»[3], բերելով «Տասը կտոր ճշմարտություն»[4], հաստատելով «Թախծի ու հավատի ուժը»[5], ինչով ապրում են «Կյանքը, հեքիաթը, մարդը»[6]: Բայց արձակագրի գրական ժառանգության ուսումնասիրությունները հետագայում ասվածից այն կողմ չանցան: Նոր բացահայտումներ չեղան «հարավային տենդով» տառապող գրողի ստեղծագործական աշխարհում, որտեղ հեղինակն ու իրական կյանքից վերցված «կործանված», «վերջացած» հերոսները հավասարապես հանդես են գալիս իբրև վեհ իդեալների կրողներ ու ամենուր դրանց տենդագին որոնողներ: Շարունակ մղումը դեպի գոյությունն իմաստավորող երազը մարդկանց կտրել է իրականությունից, համակել խելագարության հասցնող «հարավային տենդով»: Իրական ու նույնքան հեքիաթային այդ աշխարհն Ավագյանը, սակայն, հիմնում է քայլ առ քայլ՝ արձագանքելով հասարակական - քաղաքական կյանքում տեղի ունեցող և գրական միջավայրում արտացոլվող ներքին դրական տեղաշարժերին: Անհատի պաշտամունքը մեծապես խոչընդոտեց նաև հայրենադարձ գրողի տաղանդի բացահայտմանը: Նրա ստեղծագործական առաջին շրջանը գրական լուրջ ձեռքբերումներ չարձանագրեց, բայց, ինչպես նկատել է Ս. Աղաբաբյանը, Ավագյանի առաջին գործերն արդեն իսկ «Երկու որակ»[7] են համատեղում: Անգամ սխեմատիկ երկերում երևում է «Վաղուց երգված ու մոռացված»[8] թեմաներով հետաքրքրված արձակագիրը: Պիտակ, որի տակ էլ, ցավոք, քննադատ-

---

[1] Տես Արտավազդ Գ., Գիսաստղ որոնող մարդը, Գրական թերթ, 1966թ., N2:
[2] Տես Արզումանյան Լ., Արդար կյանքի ջատագովությամբ, Սովետական գրականություն,1979թ.,N9, էջ105:
[3] Տես Բաղդասարյան Ա., Վեպ Իրանի մասին, Սովետական գրականություն, 1956թ., N9, էջ 160:
[4] Տես Հովհաննիսյան Ա., Տասը կտոր ճշմարտություն, Սովետական Հայաստան, 1966թ., ապրիլի 16, էջ 3:
[5] Տես Արզումանյան Ս., Թախծի և հավատի ուժը, Գրական թերթ, 1967թ., մարտի 31:
[6] Տես Սնանյան Գ., Կյանքը, հեքիաթը, մարդը, Գրքերի աշխարհ,1971թ., N5:
[7] Տես Աղաբաբյան Ս., Երկու որակ, Սովետական գրականություն, 1958թ., N8, էջ195 :
[8] Այդ մասին հեղինակն ակնարկում է պատմվածքների անդրանիկ ժողովածուում: Տես Ավագյան Ա., Պատմվածքներ, Երևան, 1950թ., էջ 113:

վում էին Ավագյանին որպես այդպիսին բնութագրող գեղարվեստական որակները:

Գրողին ի սկզբանե մտահոգում է մարդկության ճակատագիրը: Նա ապրում է հոգեկան անեղծ սկիզբների վերագտնման ու իրականության մեջ հաստատման երազով. «Որքան քիչ բան է հարկավոր մարդկանց՝ մի կտոր հող, ծաղիկներ, մի անդորր անկյուն, Հաֆեզ»[9]:

Ստեղծագործական առաջին շրջանում, սխեմայով պայմանավորված, այս ամենի իրականացումը կապվեց կոմունիստների ու հատկապես նրանց գաղափարախոսության վեհ նպատակների հետ: «Շիկացած հող» վեպում ցանկալի եզերքը խորհրդանշող անկյունը կոմունիստական իդեալների կրող Նասիմ Փոժուհի այգին է՝ Օազիսը, որը ստեղծագործությունից ստեղծագործություն, զրկվելով կոնկրետությունից, ձեռք է բերում վերացական իմաստ, իսկ հեռավոր, հեքիաթային օազիս որոնող դերվիշը, որ սկզբում հազվադեպ է երևում, հետզհետե դառնում է Ավագյանի հերոսը, «Ես ինչպես, օ, ինչպես իմ օազիսը գտնեմ,

Լայնածավալ ամայի այս անապատում...»[10]:

Այստեղից է ահա ծավալվում տառապանքի ու անհաս երջանկության, իրականության ու երազի բախման պատմությունը՝ զերծ ամեն տեսակ կրոնական, ազգային, քաղաքական նկրտումներից. «Ի սրտե ես մի բան եմ փափագում, որ մարդիկ միմյանց չչահագործեն, իսկ ինձ համար միևնույն է, թե ով կհաստատի այդ օրենքը՝ կոմունիստները, մի երկրորդ Քրիստոս, թե Անդրաշխարհի ուժ»[11]: Սա մարդկության հավերժական ձգտումների արտահայտությունն է՝ ժամանակ ու տարածություն չճանաչող ընդհանրացում՝ ներկայացված կոնկրետ ժամանակի և եզակի կերպարների միջոցով: Դեռևս «600 տարի առաջ Հաֆեզը մտածել է գարունները հավերժացնելու մասին», իսկ հարատև այդ ընթացքի մեջ ամեն մի նոր սերունդ իրեն է համարում կատարելության բարձունքը նվաճող՝ առաջնորդվելով այն հիմնավորումով, որ «մարդիկ կհասնեն դրան, որքան էլ նրանց ճանապարհին սյուներ ցցեն, դպրոցներ խլեն, միևնույն է, կհասնեն»[12]:

Ելնելով այս համոզմունքներից՝ Ավագյանը ստեղծագործական հաջորդ շրջանում, օբյեկտիվ նախադրյալների առկայությամբ, հնարավորություն ստացավ գրական մեծ վարպետությամբ ամբողջացնելու ասելիքը: Հիմնվելով նախասիրած հոգեբանական դիտարկումների վրա՝ նա անհատի հետազոտումն սկսում է ինքնազննումից: Ռազմաօդային ուսումնարանից հեռացված նախկին օդաչուի համար «երկինքներ» արտահայտությունը դառնում է ամենայն լավի,

---

[9] Ավագյան Ա., Շիկացած հող, Երևան, 1955թ., էջ 158:
[10] Ավագյան Ա., Շիկացած հող, Երևան, 1955թ., էջ 352:
[11] Նույն տեղում, էջ 164:
[12] Նույն տեղում, էջ 370:

կատարյալի մասին պատկերացումների խտացում: Սակայն «երկինքների» տենչն ու ծանծրալի առօրյան գավեշտական հակադրությամբ ծնում են դրամատիկ հոգեվիճակ՝ տառապանքի դատապարտելով բոլոր ազնիվ հոգիներին՝ այդ թվում և «երկինքների» արծակագրին. «...մայրաքաղաքն իր խայտաբղետություններով, գույնզգույն լույսերով, հակադրություններով սկսել էր ինձ խեղդել»[13]: «Երկինքները» նա փորձում է հարավում գտնել. «Որոշեցի գնալ հարավ, այդ ժանգոտած լեռնաշխարհը, որտեղ շոգից մարդիկ կամ իմաստավորվում են, կամ խելագարվում, որտեղ անհասանելի կապույտ աղբյուրներ կան, հեքիաթային օազիսներ որոնող դերվիշներ. որտեղ աստղերի ցոլքերից վագրերը դիվային մռնչյուններ են արձակում գիշերները և մնացած բոլոր գազանները սարսափից դողում են քարանձավներում»(517): Այստեղ են խաչաձևում բոլոր նրանց ճանապարհներ, ովքեր դիմում են դեպի երազը և, երկարատև թափառուներից հոգնած, մի պահ դադար են առնում հարավային խուլ անկյունում, որպեսզի կրկին շարունակեն որոնումները օազիսների, կապույտ աղբյուրների, գիսաստղերի: Խորհրդանշական եզերքներն ու անհաս լուսատուները որոնվում են մեկ և նույն նպատակով. «Շուտով այս անապատները կողողվեն կապույտ աղբյուրներով ու կանաչ անձրևներով. կլցվեն ոսկե արտերով ու արտույտներով. թագավորության կգան հավերժական գարուններ. մարդկանց հոգիները կքնքշացնեն վարդաստաններն ու սոխակների դայլայլները...»(498): Երազ հանգրվանների ընտրությունը պատահական չէ: Գրողն իր իդեալների իրականացումը կապում է բնական, նախաստեղծ կեցությանը հատուկ դեռևս անխաթար արժեքների հետ, որոնք ժամանակի ընթացքում նահանջել են: Որքան մոտ է մարդը ակունքներին, բնությանը, այնքան բարձր արժեքների կրող է: «Երկինքների» մարդու խորաթափանց աչքերն անմիջապես որսում են նման նկարագրով առանձնացող, «երկինքները» իրենց ներսում ընդգրկող կերպարներին. «Այդ մի համաստեղություն է: Լավ համաստեղություն»[14], -գրում է հեղինակը:

Պատերազմի տարիներին Իրանի հարավը հիշեցնում էր «1800-ականների ոսկեբեր Այլասկան», որտեղ դիմում էին գայլային ախորժակով, հարստանալու մոլուցքով տարված դաշնակիցները, ովքեր անգամ պատերազմն են դիտում իբրև շահի աղբյուր և առհասարակ իդեալներ չունեն. «Ոչ, այս սև սատանաներն ընդունակ չեն այդպիսի երազներ տեսնելու»(567): Արևից խանձված, աշխարհից մոռացած հարավում, որտեղ հարգի են բարձր բարոյական արժեքները, որտեղ դեռ ապրում է բարու, գեղեցիկի լեգենդը, որտեղ սիրում են լսել

---

[13] Ավագյան Ա., Վերջին հանգրվան, Երևան, 1982թ., էջ 483: Մեջբերումները նշված ժողովածուից են:
[14] Աւագեան Ա., սՍպասելիքներ, հեռանկարներ, Սաւառնակ, Կահիրե, 1964թ., N17:

«աստղերի, կածանների, ստվերների մասին», մի տեսակ ավելորդ, անցանկալի է դրսից եկող օտարոտի շունչը: Այն սպառնում է մարդու ու բնության վաղեմի դաշնությանը՝ բնիկների շրջանում բարձրացնելով բողոքի ալիք. «-Ինչո՞ւ եք եկել Լոռեստան, ի՞նչ է, աշխարհը նե՞ղ է, չե՞ք տեղավորվում»(486):

Փոքրիկ հողակտորին կառչած լոռները մեծ աշխարհի աղմուկի, վայելքների հետ գործ չունեն: Նրանք ստեղծել են ներքին, չգրված օրենքներով կառավարվող սեփական աշխարհը. «Խոր հարավում բնիկները չգիտես ինչու առյուծին կոչում են «Մարդ», իրենց մի թզաչափ գյուղին՝ «Աշխարհ» ու զարմանալին այն է, որ «փող էլ չեն սիրում»[15]: Իսկ ինչին ողջ էությամբ ձգտում են, վեր է «փողից էլ, աշխարհից էլ»: Միայն բնությանը սիրահար ու նրա անիմանալի խորհուրդներին հաղորդակից լոռը կարող է վագրերի որսորդ համարվել՝ երբևէ վագր սպանած չլինելով. «Երեք անգամ իջել եմ ու մտել եմ եղեգնուտ, վագրերի վրա չէի գնում, հայրս պատմում էր, որ այնտեղ, հեռուներում, աղբյուր կա և ջուրը երկնքի պես կապույտ է, ես ուզում էի այդ կապույտ ջուրը գտնել»(488): Հարավում ծերունին լեգենդ է դարձել ոչ թե որսորդությամբ, այլ սերնդից սերունդ փոխանցվող «կապույտ աղբյուրի» լեգենդով: Բաբեի մասին ասվում է, որ այդպիսիներին «բնությունը հազար տարին մեկ անգամ է ծնում»: Վերջինս երկվորյակն է ծերունի Շեմսը, նա հիացած է շիկակարմիր վագրով, որի մորթու համար վաճառականները ցանկացած գինը կվճարեին: Սակայն նման արարքի ընդունակ են միայն Վալի Սեյֆին ու իր նմանները, բայց ոչ երբեք լոռը: Նա «շուն չի դառնա». «Ինչպես կարելի է աշնան այդ աստվածային արևածագին սպանել, մորթել այդպիսի կենդանի մի գեղեցկություն» (580). չէ՞ որ, ըստ հերոսների, առանց այդ էլ «ոչ մի սրբություն չի մնացել էս աշխարհում»(507): Խաթարվել է անհատի կյանքի ու հոգու ներդաշնությունը, առանց որի խեղդվում են «երկինքների» մարդիկ՝ այն որոնելով անցյալի հիշողություններում կամ «հավերժական գարուններ» հաստատելու երազում:

Վերջին դեպքում անհատը վերածվում է սոսկ «գիսաստղ որոնող դերվիշի», որն անուն չունի և հենց այդպես էլ հայտնի է միջավայրին: Եթե նա իրականության մեջ դադարել է գոյություն ունենալուց և իր իսկ դիպուկ բնորոշմամբ «վերջացած» է արդեն, ապա երազի որոնման ճանապարհին Ավագյանի ցնցոտիավոր թշվառականը ներկայանում է որպես էպիկական կերպար:Հերոսներից ամեն մեկը, ինչպես հեղինակն է բնորոշում, յուրովի արտասովոր է, «ձեռքը թափ է տվել ամբողջ աշխարհի վրա, եկել հասել է այդ հնոցային երկիրը և գնում է խավար տափաստանով»(494): Գնում է իր գոյության արդարացումն ու իմաստը ճշտած մարդու վճռականությամբ. «Ես հավատացած եմ, որ այդպես

---

[15]Ավագյան Ա., Անապատային զրույց, Սովետական գրականություն, 1969թ., N 12, էջ 43:

պետք է գնալ կյանքում»(509): Հանուն մեծ նպատակի՝ պետք է անտեսել բոլոր վտանգները. «...գրողի ծոցը, աշխարհը կլոր է և բոլորն էլ գլորվում են , որքան էլ որ գլորվես, միևնույն է, մռութդ դեմ դիմաց է գալիս, ոչ ոք չի երկարում...»(509): Ավագյանի հերոսն առաջնորդվում է հոգևոր արժեքներով և սեփական օրինակով է հաստատում, որ կատարյալի ուղին բռնելու կարիք առհասարակ բոլորն ունեն. «...ինչո՞ւ եմ ես կպել ձեր ոստայնին, սատանաներ, ա՜խր ես պետք է գնայի նրա հետ... ա՜խր գուցե ես էլ ինչ-որ բան ունեմ այս աշխարհում որոնելու»(497) , - թախծում է «գիսաստղ որոնող մարդու» ետևից Քրեստենսենը. «նա փափագում էր՝ կյանքում ամեն ինչ լավ լինի, մարդկանց գյուղերից տեղահան չանեն, ով որտեղ կանգնած է, թող իր տեղում մնա, թե չէ ինչի է նման իրարանցումով այս աշխարհը»(517):

Ավագյանի հերոսը չի էլ սպասում, թե «բյուրեղյա լույսի պես երկնքից կիջնի արդարությունը». այն կնվաճվի մարդու՝ կատարյալին հասնելու շարունակական որոնումների արդյունքում: Բնականությունը, ներքին մաքրությունն են այստեղ գնահատվում իբրև մարդուն սատվածացնող որակներ. «Աշխարհը երեք մարդ է տվել,- սկսեց նա շիրազցիներին հատուկ երգեցիկ ձայնով, - մեկը՝ Քրիստոսը, մեկը Մոհամեդը, մեկն էլ մեր շիրազցի Ջեյնոլաբեդդինը, մնացածը խուրդա- մուրդա բաներ են»(529): Սովորական հնձվորը այս շարքում հիշվելու պատվին է արժանացել շնորհիվ ներքին պարզության: Բացի այդ՝ բնությանը մոտ կանգնածները, ինչպես ասվեց, Ավագյանի ստեղծագործություններում կրողներն են հոգեկան անեղծ սկիզբների, r.որը նախանջում է պայմանականությունների առաջ՝ եղծելով մարդու բնական դեմքը. «....աշխարհում ճանապարհները ախր շատ են խառնվել, - բողոքում է կործանված ժալեն և ապա շարունակում. «....հայրս, հաջի աղան, ասում է՝ դավանանք, ես ասում եմ՝ սեր. ձերոնք ասում են՝ Քրիստոս, ես ասում եմ՝ սեր... Քրիստո՞սը որն է, Մոհամե՞դը որը» կամ «Մեչի՞թը որն է, եկեղեցի՞ն որը...»(478): Երկրորդականն ու անկարևորն են ճակատագրեր վճռում. «.... Ինչո՞ւ մայրս չի հավանում նրան, և ասում է՝ «Խալիլի, կարգվի՛ր» և հետո էլ, թե՝ «Աղջիկը ցածր դասակարգից է, մեզ վայել չէ»: Ցածր դասակարգը ո՞րն է»(469):

Մարդու մեջ գնահատել ու ճանաչել մարդուն՝ ահա թե ինչին է ձգտում իդեալ հերոսը: «Արարչի ձեռքով ստեղծված մարդ», «Աստծո որդիք», «Աշխարհի բարեկամներ»՝ այսպես է դիմում նա բոլոր նրանց, ում հանդիպում է որոնումների ճանապարհին: Իսկ որոնումները տանում են դեպի բնություն, որի երազ եզերքները իրենց անհասանելիությամբ խորհրդանշում են հավերժական ձգտումներ: Անվախճան է իդեալը տանող ուղին: Որոնողներից ոչ մեկին հայտնի չէ, «թե որտեղ է այն տեղը, որտեղ պետք է կանգ առնել»(550): Այդու-

հանդերձ, նրանք մղվում են դեպի վերջնական նպատակը՝ շատ լավ իմանալով, որ իրենից առաջ և «ոչ ոք էլ իր օազիսը չի գտել»(524):

Շեմսը ապրում է վեհի, գեղեցիկի այն երազով, որին չէր հասել Հայր Շեմսը, բայց իր երազի իրականացումը կապում է հատկապես Թոռ Շեմսի հետ, որը, սակայն, մորթվում է հենց ծերունու աչքի առջև. «Նա նայում էր արնաթաթախ թոռան ճակատի լաքային, լուսնի նման կլոր լաքային ու մտքում կրկնում էր՝ աստղով մարդ է լինելու: Աստղո՞վ մարդ...»(575): Կիսատ է մնում բնությանը ծուլված լոռի երազը: Այս առումով խոսուն է նաև «Ուղտը մեռավ» պատմվածքը, որտեղ «Սաբուր» ուղտը մեռնում է «օազիսից մի փոքր հեռու», այդպես էլ նրան չհասած: Հերոսի հոգեվիճակը, դրությունը կարելի է այստեղ ամբողջացնել, պարսկական «Բեդվին Սելիմի» զրույցից վերցված հետևյալ տողերով. «Դժբախտ եմ ես, ինչպես Բեդվին Սելիմը. Իմ ուղին անդարձ է, իմ կայանն անհաս»[16]: Այսպես՝ բարձր Ի

Իդեալի ու անիդեալ, գորշ իրականության բախումը հերոսի ներաշխարհում առաջ է բերում տառապագին դրամա, որը լուծվում է ոչ թե մարդկային ներդաշնակության կորստին լուռ համակերպումով, այլ դրան հասնելու այն կրկին վերագտնելու վճռականությամբ: Ըստ Սերգեյ Աթաբեկյանի՝ «....մեծ որոնումների մեջ արձակագիրը ստեղծում է վերադարձի պատկերը»[17], բայց իրականում վերադարձը չկա: «Վեց հազար տարի ման եկա աշխարհում և որոնեցի», - ասում է հերոսը՝ խտացնելով իր մեջ ողջ մարդկությանն ու նրա դեռևս անհնված իդեալը: Իհարկե, գրողն ամբողջ հոգով միայն այդ է ցանկանում, ապրում է այդ երազով ու հավատով. «Սպասում եմ և գիտեմ Որ դու մի օր կգաս...»:

Ավելի ուշ, վերանայելով ժողովածուն, հեղինակն այնտեղից դուրս է թողել այն երկու պատմվածքները («Վերջին սահմանագիծ», «Նարիմանի վերադարձը»), որոնք նման թյուր կարծիքի տեղիք էին տվել: Մարդը շարունակ գնում է դեպի իդեալը, բայց սոսկ երազում, տենդի մեջ է հասնում «կապույտ աղբյուրին», երբ արդեն կործանված է ներդաշնակությունը խաթարող ուժը՝ հանձին Վալի Սեյֆու: Շարունակելով միտքը՝ ավելացնենք, որ իրար հաջորդող վերջին պատմվածքներով Ավագյանը ամփոփում, հանրագումարի է բերում ասելիքը: «Ամենավերջինը» պատմվածքում հարավ գնացող ամենավերջին «երկինքներ» որոնողը ժալեն է, որ մնացողների երեսին է շպրտում «Ի՞նչ մարդիկ եք դուք»(555): Հաջորդ՝ «Նա կգա» վերնագրով գրողը հաստատում է, որ չնայած մարդը դեռ հեռու է իդեալից, բայց մի օր ի վերջո հասնելու է դրան: Ասվածը

---

[16] Ավագյան Ա., Վաղը, Երևան, 1951թ., էջ137:
[17] Աթաբեկյան Ս., Բգկտված հոգիների փիլիսոփայությունը, Գրական թերթ, 1971թ., N25:

ներկայացվում է խորհրդանշական պատկերով. Բարթուղը սպասում է ջրաղացի «կապույտ սայլի» ետևից գնացողին, որը նույն «ԿԱՐԿԱՏԱՆՆԵՐՈՎ, ՈՏՔԲՈԲԻԿ, ԱՆՏՈՒՆ ՄԱՐԴՆ» է: Երկար է սպասում նրան Բարթուղը. «մեկ օր, մեկ ամիս և հինգ հազար տարի»: Բնականաբար, փոխվում է ամեն ինչ. «Արարչի կապույտ գմբեթում աստղերն սկսեցին տեղաբաշխվել, և Հարդագողն իր ճանապարհը փոխեց», բայց դեռ սպասում է Բարթուղը. «նայում է այգեփողոցին, որը չկա, լայնատարած դաշտին, որ չկա, հեռու կապույտ մշուշում մի ժամանակ նշմարվող կիսավեր ջրաղացին, որը նույնպես չկա, և սպասում է: Հարյուր հազար տարի ևս, ու էլ ոչինչ չի մնա: Եւ հենց այդ ոչինչների արանքով կգա այն մարդը»(567): Նրա գալստյան ու արտաքինի նկարագիրը հիշեցնում է Նարեկացու «Հարություն» տաղը: Բայց այստեղ խոսքը վերաբերում է մարդու մեջ աստվածային որակների հարությանը: Ոչինչները ոգու մաքուր ակունքներն են, որին արդեն հասած կլինի բնության նախաստեղծ մաքրության մեջ կատարելության վերջնագիծը հատած հերոսը. «Նա կգա կապույտ ջրաղացի սայլով, սայլի անիվներն այդ ժամանակ կլինեն ոսկյա. Ձիերը կլինեն շիկակարմիր ու հրեղեն թևեր կունենան, կածանները, որոնք ժամանակին լցված են եղել հողով ու քարակոշտերով, հակինթներով կլցվեն, ադամանդներով և աստղային փոշիներով: Նա, երբեմնի կարկատաններով այն մարդը կգա Զոլֆեղար արքայազնի նման, արևագույն բեղ ու մորուք կունենա, ուսերին փռած նրա մազերը կլինեն ոսկեթել, աչքերը մի-մի լեռնային կապույտ լիճ»(567): Սա «ԵՐԿԻՆՔՆԵՐ» տեսած արծակագրի երազն է, որ կարող ենք ամբողջացնել Հաֆեզի խոսքերով, ինչով մխիթարվում էին տառապյալ հերոսները.

«Կորած Հովսեփը կվերադառնա Քանան,
Բուրաստան կդառնա այս ավերի տնակը»[18]:

Հենց այս հավատով ու լավատեսությամբ էլ կախման կետեր է դնում Ավագյանը՝ համոզված, որ «կապույտ ջրաղացի սայլի» ետևից գնացած ցնցոտիավորը կվերադառնա երազին հասած . «Ախր նա պետք է որ գա»(567):

Resume' in the article Presented Avagyans period of creative development' in base having specific to the writer's human ideal's coming true. Looking for beuty and kindness for the farmer pilot "skies" expressions becomes a type of checking the values. As an expression of the writer's dreams, in reality is encluded a legend, to communicate a dishonest world and a man to honest qualities.

[18] Հաֆեզ, Լիրիկա, Երևան, 1957թ., էջ68: